


ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ / 2021թ. 3-րդ եռամսյակ/

Մտորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 109 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շատրվանող հորատանցք, 44 չշատրվանող հորատանցք և 41 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումը կատարվում է տարին 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ 51 դիտակետերից:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Հաղարծինի N2058 և N2059 դիտակետերում նկատվել են ծախսի իջեցումներ:



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 39 դիտակետում՝ 11 բնաղբյուրում, 7 շատրվանող և 21 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանում ճնշումային հորատանցքերում՝ N 2001 (Ակնաշեն), N1521 (Գայ), N2002 (Տարոնիկ) և N2021 (Ջրառատ) տարվա սկզբի հետ համեմատ նկատվում է ծախսերի իջեցում 0.3 – 0.8 լ/վ սահմաններում, սակայն 3-րդ եռամսյակում ծախսերը կայունացել են:


Արմավիրի մարզի Եղեգնուտ, Ակնաշեն, Ապագա, Վարդանաշեն, Արագափ, Տարոնիկ, Բամբակաշատ, Հայկավան (NN 105, 108, 152, 192, 1533, 1537, 2018, 2024, 2025, 2026, 2055 և 2057) համայնքների հորատանցքերում նկատվել են մակարդակների կտրուկ իջեցումներ կապված ոռոգման շրջանում պոմպերի շուրջօրյա աշխատանքով:

Մակարդակի աննշան իջեցումներ են նկատվում Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու դիտակետերում՝ Արտենիի N2081, Մյասնիկյանի N2082 և Արտամետի N2083:


Շիրակի մարզի Աշոցքի N2039, N2040 և Յողամարզի N2077 դիտակետերում նկատվում է աղբյուրների ծախսերի իջեցում՝ 0.1- 0.9լ/վ: Ծախսի իջեցում է նկատվում նաև N2031 (Գյումրի), N2032 և N2035 (Մարմաշեն) աղբյուրների դիտակետերում: Առափիի N2042 դիտակետի ջրհորում ջրի մակարդակը իջել է 30 սմ-ով, իսկ Ախուրյանի N2043 դիտակետի ջրհորում այն բարձրացել է 90 սմ-ով:

Բնաղբյուրներ


Ախուրյանի ՋԿՏ




Ախուրյանի ՋԿՏ



Ախուրյանի ՋԿՏ




Ախուրյանի ՋԿՏ




Չատրվանող հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ



Գրունտային ջրհորներ

Ախուրյանի ՋԿՏ



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք


Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 27 դիտակետերում, այդ թվում՝ 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 12 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի (Միս, Հայանիստ, Գրիբոյեդով) հորատանցքերում I կիսամյակի հետ համեմատ NN 78, 2005, և 2056 դիտակետերում նկատվում է ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումներ մինչև 0.5 մետր: Համեմատաբար կայուն ծախս է նկատվում N1535, N1536 (Միս) և N1519 (Մասիս) հորատանցքերում: Հովտաշենի N2008 և N2053 դիտակետերում I կիսամյակի հետ համեմատ ծախսերը նվազել են մինչև 50 տոկոսով

Մակարդակների աննշան իջեցումներ են նկատվում նաև Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2085 Արագած, N2086 Դոդո, N2087 Աղավնատուն, N2088 Լեռնամերձ դիտակետերում:


Հրազդան գետի Բջնի-Սոլակ հատվածում գտնվող N246, N1297 և N1832 աղբյուրներում III եռամսյակում նկատվում են ծախսերի իջեցումներ:

Նիգավանի N2010, N2011 և Խորոնքի N2023 ջրհորերում գրունտային ջրերի մակարդակներն իջել են 0.3-1.2մ-ով: Ծախսի անշան ավելացում է նկատվում Ապարանի N2051 «Միրո» աղբյուր դիտակետում:




Շատրվանոցի հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Շատրվանոցի հորատանցքեր
Ծախս, լ/վ

Հրազդանի ՋԿՏ



Չշատրվանոցի հորատանցքեր
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ



Գրունտային ջրերը

Հրազդանի ՋԿՏ



Մակարդակ, մ



Մեանի ջրավազանային կառավարման տարածք


Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 16 դիտակետում՝ 5 բնադրյուրում, 6 շատրվանող և 5 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Ակունքի N31, N902, N1053 աղբյուրներում և Վարդենիսի, Գանձակի շատրվանող հորատանցքերում (N1809, N2013) նկատվել են ստորերկրյա ջրի ծախսի իջեցումներ: Վարդենիսի N1811 և Վաղաշենի N2090 հորատանցքերում ծախսը կայուն է: Գավառի N2014 աղբյուրի ծախսը ավելացել է 0.15 լ/վ-ով:




Շատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ

Սևանի ՋԿՏ



Շատրվանոց հորատանցքեր
Ծախս, լ/վ

Սևանի ՋԿՏ






Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում՝ 10 բնադրություն, 3 շատրվանոց և 10 չշատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Մալիշկա (N502), Գառնիի (N2045, N2046) համայնքի դիտակետերում հուլիս-սեպտեմբեր ամսիներին նկատվում է ծախսի ավելացում, իսկ Ջեդեա (N2050), Եղեգնաձոր (N787), Ջերմուկի (N2048), Կեչուտ (N2060) դիտակետերում՝ նվազում: Ագարակաձորի (N785) դիտակետում աննշան փոփոխություններով ծախսը կայուն է:

Արարատի մարզի Սուրենավանի N2067 դիտակետում նկատվում է ծախսի ավելացում: Համեմատաբար ջրի մակարդակի կայուն վիճակ է Եղեգնավանի N2065 (թույլ իջեցումներով), Արարատի N2076 և Լուսառատի N2074 (թույլ բարձրացում) դիտակետերում: Դալարի N2072 դիտակետում գրունտային ջրերի մակարդակը բարձրացել է 0.6 մետրով:




Շատրվանոցի հորատանցքեր
Ծախս, լ/վ

Արարատյան ՋԿՏ




Չշատրվանոցի հորատանցքեր

Արարատյան ՋԿՏ



Գրունտային ջրհորներ

Արարատյան ՋԿՏ



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտա-
դիտարկումներ կատարվել են 7 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը
և ծախսը:

Գորայք N529, Շաքի N532, Գորիս, N899 Անգեղակոթ N1323 համայնքների
դիտակետերում նկատվում են համեմատաբար կայուն ծախսեր, ավելացման միտումով:
Իսկ Սպանդարյան N537, Անգեղակոթ N1175 և Գորիս N1399 դիտակետերում աղբյուրների
ծախսը իջել է:

